ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

«Բազալտ» ԱԿ ՀՀ Կոտայքի մարզի Գյամրեզի անդեզիտաբազալտների հանքավայրի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 22.08.2012թ.-ի ՆՇԱԹՎ-29/014 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման ընթացքում ընկերության կողմից կատարվում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ արտանետվող փոշու մշտադիտարկում,
2. օգտագործված մեքենայական յուղերով և քսայուղերով արտադրական հրապարակի տարածքի աղտոտման մշտադիտարկում:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում Գյամրեզի հանքավայրում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«ԲԱԶԱԼՏ» ԱԿ
նախագահ
Պ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկում-ների վայրը | Ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախականու-թյունը | Միջինացված արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մթնոլորտային օդ | Բացահանք | Փոշի | Նմուշարկում, ավտոմատ չափում | Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ | 0.071մգ/մ$^3$[1] |
| | Լցակույտ | | | | |
| Մակերևութային ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Ստորգետնյա ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Հողային ծածկույթ | Արտադրական հրապարակ | Նավթամթերք-ների արտահոսքեր | Դիտարկում, նմուշարկում | 2025 թվականի ընթացքում ամսեկան մեկ անգամ | Արտահոսքեր չեն դիտարկվել |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | Նախատեսված չէ | | | | |
| Աղմուկ | Նախատեսված չէ | | | | |
| Ոչ վտանգավոր թափոններ | Նախատեսված չէ | | | | |

[1] Հավատարմագրված լաբորատորիայի կողմից փոշու մոնիթորինգի իրականացման խնդիրների հետ կապված, մոնիթորինգի արդյունքը նշվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից մինչև տասը հազար բնակչության դեպքում փոշու ֆոնային կոնցենտրացիաների վերաբերյալ ժամանակավոր առաջարկությունների /https://meteomonitoring.am/web/render/text/sub_breadcrumb_id/20/air/concentration/

| | |
|---|---|
| Վառելանյութերի պահեստարաններ | Հանքավայրի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուց-վածքներ | Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան |
| Լեռնատրանսպոր-տային սարքավորումների աշխատանքային վիճակ | Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում |



4456200
4456000
8475200
8475400
8475600
1520.0
1525.0
1530.0
1535.0
1540.0
N3
N3-1
Օբյեկտների անվանումը
1. Բացահանք
2. Մուտքային ճանապարհ
3. Արդյունաբերական հրապարակ
N3-1 Նավթամթերքների պահեստավորման տարածք
4. Լցակույտ
Մթնոլորտային օդի մշտադիտարկում բացահանքում և լցակույտում
Արտադրական հրապարակի մշտադիտարկում


Նկար. 1